ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» մարտի 2022թ. ՆՄՈ/197-2022

Ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Հ. Մաթևոսյանի՝ 2022 թվականի մարտի 23-ի N04/03.14/8575-2022 հանձնարարականը՝ համայնքներում գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի հնարավոր շահառուներին ցուցակագրելու աշխատանքները կազմակերպելու, նրանց շրջանում գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության պատշաճ ներկայացման և շահառուների խմբերի ընդլայնմանն ուղղված աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա.Այվազյան)՝ համայնքների ղեկավարների և վարչական շրջանների ղեկավարների աջակցությամբ ցուցակագրել այն գյուղացիական տնտեսությունները, որոնք կարող են գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի հնարավոր շահառուներ լինել:

   Այդ նպատակով պարբերաբար այցելել համայնքների վարչական շրջաններ, տեղում դիտարկել տնտեսությունների հնարավորությունները և ձեռնամուխ լինել շահառուների շրջանում գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի պատշաճ ներկայացմանն ու շահառուների խմբերի ընդլայնմանը:
3. Սույն որոշմամբ սահմանված 2-րդ կետով նախատեսված աշխատանքներն իրականացնել 10 աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 3/25/2022 15:40:48 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2022 թվականի մարտի 25 -ի
ՆՄՈ/497-2022 որոշման

ԿԱԶՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Արթուր Այվազյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
գյուղատնտեսության բաժնի պետ՝ Մարտիրոս Սարիբեկյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի
գլխավոր մասնագետ՝ Արմեն Ավչյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
զարգացման ծրագրերի,զբոսաշրջության և
վերլուծության բաժնի պետ՝ Լիլիթ Մուշեղյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
զարգացման ծրագրերի,զբոսաշրջության և
վերլուծության բաժնի ավագ մասնագետ՝ Հերմինե Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարության գիտության խորհրդատվության
նորարարությունների մոնիտորինգի վարչության
Արմավիրի մարզային բաժնի պետ՝ Արզուման Տոնոյան(համաձայնությամբ):

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

24.03.2022

VERIFIED OCSP 24.03.2022 15:59:26 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023